1895 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 (13) ԿԻՐԱԿԻ

№. 113—ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 113

1895 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 (13) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց. № 22, տան Խանդամիրովի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.
Օտարաշխարհցիք պէտք է գրեն՝ Тифлисъ. Редакція "Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում՝ են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Կրկին նոր շարժումներ Կ. Պոլսում։
Անգլիական և ռուսաց նաւատորմիղը։
Բանակցութիւնների վերանորոգումը։
Նաւային ցոյց Բոսֆորում։
Անգլիայի պատասխանատուութիւնը և գեսպաններ։
Անգլիական գեսպանի ցուակցութիւնը։
Սուլթանի գրութիւնը։
Զարժումները շարունակվում են։
Կրկին «մի քանի փոփոխութիւններ»։
Սուլթանի առողջութիւնը։
Նոր մատնաժողով։
Դարդանելը փակուած։
Քեամիլ փաշա։
«Նով. Վր.» անհակի միզացրութիւնը։
—
Մի կարևոր հարց։
Բերանի ջուրը վազում է։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Հանգանակութիւն Բաքւում։ Երկրագործութեան գիւղատնտեսական վերատեսուչը։ Երզրումի անցք. Հիւպատոսի մենումը։ Կարսի երկաթուղու գիծ։ Մի նոր առևտրական։ Զարարիա Հարիման։ Բրայլից։ Հայրապետից։ Սանահնից։ Մղարթից։ Նամակ Զամաղուց։ Նոր աւազակային խումբ։ Նոր տեղեկութիւններ աւազակների մասին։ Մի նոր պատմական գրամաւ։ Հնաախոսական գիծ։ Ժարկին խոզդալութիւն։ Հայոց ներկայացումներ։ Նամակ Դորուցից։ Նամակ Լոնդոնից։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ. — Կարինի «Խաչազուրկի» Արշակիրելից—Յաշհաննեն եպ. մահը։ Խալամ գաղթականներ։
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

—

ԿՐԿԻՆ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Կ. Պոլիս 20-ին սեպտ. (2 հոկտ.)։ Երեկոյեան կրկին սկսուեցան յուզմունքները երեք կէտերում՝ Իւսկիւտարում, Պանկալթիում և Բալըզ թաղերում, Հայոց եկեղեցու մօտ։ Սպանուած հայերը՝ վնասուածների թիւը տաճիկները 36 են ցոյց տալիս, իսկ իրապէս 200 հոգի։ Վաճառականները խանութների առաջ գրգռիչ ճառեր էին արտասանում։ Մեծ քաղաքութիւն կանառարած է։ Այսօր հայերը տներից դուրս չեն գալիս։ Բազմաթիւ խանութներ փակ են։ Քաղաքի մէջ շրջում են զինուորների խմբեր։ Բ. Դուռը հրատարակեց ազատ ծանուցումն, թէ խիստ պատասխանատուութեան կենթարկուի ամեն կարգ խանգարող և առանց բացառութեան ամեն ոք, որ գէնքով զինադրութիւն ցոյց կըտայ։ Օտար պետութեանց ներկայացուցիչներն պատում են իրանց հպատակներին, որոնք կալանաւորուած են, և Դրան վերջնական ծանուցումն դաշնագրութեանց հակառակ ապօրինի կարգադրութիւն են համարում։

—

ԱՆԳԼԻԱԿԱՆ և ՌՈՒՍԱՑ ՆԱՒԱՏՈՐՄԻՂԸ

ԲԵՐԼԻՆԻՑ, սեպտ. 23-ից հեռագրում են.—«Լրագիրները խորհուրդ են տալիս նաւաբեռնական դաշնակցութեանը պաշտպանութեամբ վերաբերուել Տաճկաստանում տեղի ունեցած դէպքերին և միևնոյն ժամանակ նախատում են Անգլիային նրա ատամնոսող քաղաքականութեան համար։ Նախատեսում է որ անգլիական և ռուսական նաւատորմիղի Բոսֆոր մտնելն անխուսափելի կը լինի. գերմանական վեհաժողով հրաւէրին ամենևին հակառակ չի, համարվում։

—

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

„Times"-ին հեռագրում են Կ. Պոլսից, թէ բրիտանական, ֆրանսիական և ռուսաց գեսպանները շատ մօտ հրահանգներ կրտաման իրենց կառավարութիւնից վերանորոգելու Բ. Դրան հետ բանակցութիւնները հայկական խնդրի վերաբերմամբ։

—

ՆԱՒԱՅԻՆ ՑՈՅՑ ԲՈՍՖՈՐՈՒՄ

Կ. Պոլսից հեռագրում են «Նով. Վր.»-ին. Ի նկատի ունենալով տաճկական Հայաստանում ծագած խռովութիւնները և այն հանգամանքը, որ տաճիկները հայ բանտարկեալներին խեղդում են՝ գեսպանները Դրանը միաձայն բողոք տուին։ Պետութիւնները մտադիր են Բոսֆորում պալատի առաջ ծովային ցոյց կատարել։

—

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Լոնդոն 23-ին սեպտ. (5 հոկտ.) Տեղացի լրագիրները վիճարանում են ֆրանսիական, գերմանական և աւստրիական մամուլի ներկայացուցիչների հետ, որ մեղադրում են Անգլիային այն անկարգութեանց գրգռման մէջ, որոնք տեղի ունեցան Կ. Պոլսում։ Անգլիայի քաղաքական աչխարհը, կարծես, զարմացած է Եւրոպայի ցամաքի միաձայնութեան վերայ, որով նա՝ Անգլիան պատասխանատու է համարում Տաճկաստանում թափուած արեան համար։

Ինչպէս երեւում է, Քեամիլ փաշան հեռանում է Գերմանիայի խորհրդին, ասում է Standard-ը կրկնապատկեալ խառնվեամբ յարձակվում է Տաճկաստանի վրայ, յայտնելով, որ վերջինը բոլորովին կորցրել է Անգլիայի կարեկցութեան և պաշտպանութեան իրաւունքը։ Լրագրի կարծիքով եւրոպական պետութեանց ներկայացուցիչների բողոքը կարող էր պատերազմի առաջն առնել և Տաճկաստանի ամբողջ նահանգների վիճակն արգելել։

—

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՑՈՒԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Նովոստին» հեռագրում են Կ. Պոլսից.—Անգլիական գեսպանը Հայոց Պատրիարքին ցուակցութիւն յայտնեց հայերի կրած զոհաբերութեանց համար։ Քեամիլ-փաշան պահանջում է, որ Դուռն ընդունէ պետութիւնների մայիս ամսում առաջարկած ծրագիրը. հակառակ դէպքում սպառնում է հրաժարական տալ։ Ֆրանսիական գեսպանը հեռացրեց Համոտյին, թէ բանակցութիւնները յաջող կերպարանք են ընդունում։

—

ՍՈՒԼԹԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

ԼՈՆԴՈՆԻՑ հեռագրում են «Նովոստիին». — «Այսօրուայ պաշտօնական թերթը հրատարակեց սուլթանի գրութիւն Կ. Պոլսի շարժումների առթիւ, որով հայերին մեղադրում է։ Պետութեանց գեսպանները շատ անբաւականացած են։ Սուլթանի գործողութեան դէմ ուղղուած ծանրակշիռ հեռագիրներ են սպասվում։ Ասում են, որ Կ. Պոլսում մի քանի նոր բարձրաստիճան պաշտօնեաներ նշանակուեցին։

Սուլթանը վրդովմունքից դիւանին է քրէ։

—

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

«Ռուսաց գործակալութիւնը» հեռագրում է Կ. Պոլսից «Նովոստիին». «Սեպտեմբերի 27-ին Բոյաջեաբում լուրջ շարժումներ տեղի ունեցան։ Ստամբոլում և Պերա թաղում խռովութիւնները շարունակվում են։ Զոհերի հայերի խանութները առաջուան պէս փակ են։ Հրամայուած է չճանկել, որ դէսիրը որձէ նաւ ամենի Դարդանէլում։

—

ԿՐԿԻՆ «ՄԻ ՔԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ»

„Standard"-ը հաղորդում է, թէ տաճիկ նախարարների ժողովը, որ ամբողջ գիշեր նիստ ունէր, վճռել է ընդունել մեծ պետութեանց առաջարկած հայկական ռեֆորմների ծրագիրը մի քանի փոփոխութիւններով։

Կրկին նոյն պատմութիւնը...

—

ՍՈՒԼԹԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Փարիզի մի քանի լրագիրներ հրատարակել էին, թէ հայերը մեծ յոյս ունէին որ Թիֆլիսում հասունականարն մեծամեծ փոփոխութիւններ տեղի կունենան, որովհետև սուլթանի առողջութիւնը վերջին ժամանակներս խանգարուած է և շատ հայ կեանքի թելը կտրել է կըպտտելու։ Այժմ հեռագրում են «Liberté»-ին Կ. Պոլսից. «Սուլթան Աբդուլ Համիդը երբեք այնպէս լաւ չէ զգում, ինչպէս երբեք (?!)։ Այս բանին երևի թէ սպասողներ կարող էին լինել այն բոլոր անձինքը, որոնք վերջին օրերը ներկայացել են պալատում»։

—

ԴԱՐԴԱՆԵԼԸ ՓԱԿՈՒԱԾ

Պետերբուրգից «Նով. Օբ». ստացել է հետևեալ հեռագիրը. Նովոստին հեռագրում են, թէ Պետութիւնները պահանջում են որ եւրոպական ներկայացուցիչների մասնակցութեամբ մասնաժողով կազմուի հակա-հայկական խռովութիւնների գործը քննելու համար։ Հրաման է արձակուած, որ նոյն իսկ փոստատար նաւերին թոյլ չտան անցնել Դարդանելով։ Ֆրանսիական «Ortegal» նաւը կանգնեցրին թնդանոթների հարուածներով։

—

ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱ

Նոր նախարար Քեամիլ փաշայի մասին հետևեալ տեղեկութիւններն ենք հաղորդում։

Քեամիլ փաշան եգիպտական մամլուկներին ծնել է Կիպրոս կղզում, ուր նոյա հայրը ոստիկ պաշտօն էր վարում։ Նա կրթուել է Կիպրոսում, յետոյ տեղափոխուել է Կ. Պոլիս և պետական ծառայութեան մտել։ Նա շատ շուտ առաջ գնաց ու բարձրացաւ։ 1882—1885 թուականներ նա Վարուֆների նախարար էր։ Երբ Բուլղարիայի իշխան Աղէքսանդրը բուլղարական զօրքերն արևելեան Ռումելիա ուղարկեց, Քեամիլ փաշան Սաքիդի տեղ մեծ վեզիր նշանակուեց։ Այժմս նա նոյնպէս փոխանակեց Սաիդ փաշային, միայն այն տարբերութեամբ, որ այս անգամ վերջինի անկման պատճառ բուլղարական գործերը չէին, այլ հայկական խնդիրը և անգլիական ազդեցութիւնը։ Քեամիլ փաշան ամհասարակ անգլիական մարդու անուն է վայելում, նա լաւ խօսում է անգլիերէն, յունարէն և արաբերէն։ Քեամիլ փաշան հրէական ծագում ունի։

—

«Նովոյէ Վրեմեան» անհատական գիտողութիւնով Կ. Պոլսոյ շարժմանց մէջ մեղաւոր է համարում Անգլիացիներին։ Իր այդ մեղադրութիւնը լրագիրը մասամբ հիմնում է հետևեալ հեռագրի վրայ, որ նա քաղում է Բեռլինի գերմանական լրագրից. «Հայոց Պատրիարքարանի վրայ մի ժամ շարունակ ծածանում էր անգլիական դրօշակը։ Տաճիկ ոստիկանութիւնը վերջապէս վերցրեց այդ դրօշակը։ Ճիշդ կէսօրին, կամ առաւօտեան, որ տեղի էր ունենում Դրան առաջ, ամբոխի մէջ, նկատուեցին անգլիական գեսպանատան երկու թարգմանները, որոնք հեռանում էին կռուին կարգի մէջից (ամբոխի մէջ և միևնոյն ժամանակ կարգի մէջ, երկուսից մէկը սուտ է)։ Զաւեշտն այսպէս զարմացրեց այն փաստը, որ անգլիական գեսպանութեան մէջ աւելի շատ և աւելի լաւ կարելի էր տեղեկութիւններ ստանալ շարժումների մասին, քան ոստիկանութեան մէջ։ Ոստիկանութեան ներկայացուցիչները խռովութիւնների տեղը հասան անգլիական թարգմանի հետ միաժամանակ։ Բանտարկեալ հայերի մօտ գտնուած են 500 ռեվոլվէրներ և շատ փամփուշտներ։ Բոլոր ռեվոլվէրները անգլիական չէին են, բոլորովին նոր և միևնոյն մեծութեան»։

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑ

—

Հինգշաբթի օր Թիֆլիսի առաջնորդարանում կայացած ժողովը նշանաւոր է մեր եկեղեցու բուն ձեւական և տնտեսական բարեկարգութեան համար։ Թէև ժողովն խօսելիք ունի է ոչ ցանկալի եղրակացութեան, բայց կրկնում ենք, այդ ժողովը նշանաւոր է նրանով, որ նրա մէջ շօշափուել են շատ կարևոր հարցեր։ Ինչպէս տեղեկացանք՝ այդ ժողովը հրաւիրել է Սրբազան Առաջնորդը Մայրու եկեղեցու երէցփոխ պ. Բ. Ալիխեկեանի յայտարարութեան հիման վրայ։ Պ. Ալիխեկեանը մի հասարակ հարց է առաջարկել հոգևոր կառավարութեան, այն է՝ որ ծխականներից պարտադիր եւ շատ ուշուշին այնպէս անուանեալ «գիտանեգանի», «գեղարդի», «զանի», «Թաղերի» և այն ծախսեր, որոնք խիպալու պատճառական տարբեր են, չեն ենթարկուած որ և է կոնտրոլի։ Ի նկատի ունենալով, որ այդ մասերի պատասխանը կը պահանջի և եկեղեցու՝ ընդհանուր եկամուտը պ. Ալիխեկեանն առաջարկում է այդ բոլորի փոխարէն կանոն դնել, որ ծխականները պահեն, թաղման և այլ գէպքերում ժամ գնեն ուղղակի եկեղեցուց և ոչ գրպից—«սորոցից»։ Իսկ թէ այդպիսով կանխման եկեղեցու եկամուտը, այդ անտարակուսելի է՝ ի նկատի ունենալով որ եկեղեցին ինչ գնով գնում է մոմը, միշտ վաճառում է կրկնապատիկ գնով. ասել պարզ է, որ սրբարի այժմ եկամուտ ունի եկեղեցին, այնուհետև այդ կանոնը գնելուց յետոյ կրկնապատիկը, բայց կանոնով մի սրուշ ապրելից—մոմից, որի կէսը և գինը յայտնի է և կոնտրոլի ենթակայ։ Սրբազան առաջնորդը այդ խնդիրն տուել է կանոնական կերպարանք և առաջարկել է քահանաների և երեցփոխների վճռին։

Ըստ մեր համեստ կարծեաց այդ խնդիրը բուն տնտեսական արտաքին ձեւական խնդիր է. այդպիսի խնդիրներ վճռելու համար են ընտրվում հայոց եկեղեցիների երեցփոխները, որոնց գործունէութեան շրջանը միմիայն տարբեր է քահանայական արդիւնաբերութեանց և ընդհանուր քահանաների արդիւնաբերութեանց միմիայն տարբեր է երեցփոխի հաշուից։ Իսկ այն գիտարբի, գիտանեգանի, խաչգնի, թաղերի և այն համար վերցրած փողերը ոչ արդիւնաբերութեան են, ոչ եկեղեցական խորհրդի և ոչ իսկ ծէս, այլ միայն հարկեր և այն էլ անօրէն, անձնահարկեր, որ ամեն խոտ են ծխականներից այն կամ այն ծէսի համար։ Մեծամեծ չէ կարող եղել, բայց նրա մասնիկը կարող է ամփոփուել և արծաթագործ և ժիժեղեղ և համաբան ապաստանել գաղափի մէջ և մինչև անդամ սովի կոտի մէջ. բայց այդ բոլոր թէ ակնկալուած պատրաստեր և թէ կոտի պատուիրանք հանգուցեաների վրայ դեռի կատարած թաղման ծէսը ոչ մի քահանայ խրատելու չունի հինգ ռուբլի պահանջել ով և է նշմարիչ գերեզմանի վրայ, այն պատճառաւ, որ նրա ազգականները 5 րուբլի պակաս են վճարել... նոյն իսկ արդանի, ազգականներից և ծանօթներից զուրկ թշուառին, նոյն իսկ զուգին, աւազակին, եկեղեցին չէ զրկել եկեղեցական ծէսը պահանջելու իրաւունքից, թէև ամենքն էլ գիտենք որ կայ «Տարուսարի» պաշտ և թաղում և կայ «ողջասար»... բայց ով կարող է մերժել, որ եթէ մէկը թաղելի վարձ վճարելու փող չունի, նա պէտք է անպայման յետ դառնայ եկեղեցուց, կամ եթէ մէկը գիտանեգանի փող չունի նրա մարմինը պէտք է յատակի վրայ դրուի և անթաղ մնայ. իսկ այդ եթէ չէ պատահում, դրա նման պատահում է։

Յաճախ տեղի են ունենում նոյն իսկ հարսանեաց և թաղումների ժամանակ երկար ու բարակ սակարկութիւններ քահանաների և ժողովրդականների մէջ, այս ինչ կամ այն ինչ գիտանեգանի, կամ «զանի» կամ թաղի համար — սակարկութիւններ, որոնց հետեւանքներին իւրը եկեղեցու գլուխը Քրիստոս խարազանով դուրս արեց տաճարից. արդեօք ինչու չհասցնել այդ սակարկութիւնների վերջը, ինչու չարիքը արմատից չկտրել, մանաւանդ որ այդ հանգամանքը բացի ժողովրդին առհասարակ գիւրութիւններ պատճառելուց միևնոյն ժամանակ օգնում է եկեղեցու պայծառութեան, արտաքին և նոյն իսկ ներքին բարեկարգութեան, ազատում է քահանաներին ժողովրդականների հետ անհաճոյ ընդհարումներ ունենալուց, գերազանցում է եկեղեցու նկատմամբ հաշուեպահութիւնը և կոնտրոլի ենթարկելու միջոցը։

Միայն մի առարկութիւն կարող է լինել պ. Ալիխեկեանի առաջարկութեան դէմ. այն է՝ թէ գիտարբի, խաչգնի, թաղերի և այլն հարկերը հնուց սովորութիւն է, որովհետև ընդունուած թէ եկեղեցուց թէ ծխականներից։ Նախ որ այդ առարկութիւնը հիմնովին սխալ է, որովհետև այդ սովորութիւնը կայ միայն մի քանի քաղաքներում, իսկ «Թաղերը» բացառապէս Թիֆլիսում և Ռուսաստանի մի քանի քաղաքներում. և եթէ ենթադրենք իսկ թէ այդ սովորութիւնները հնուց են, այնու ամենայնիւ դրանք ծանրաբեռնիչ են ժողովրդի համար, առանց առաջին օգտաւէտ գործադրութիւնը համար։

Մի կարևոր հանգամանք ևս կայ, այդ այն է, որ խաչգնի, գիտարբի, թաղերի և այլն ծախսերը ժողովրդից առնվում են քահանաների միջոցով. իսկ եթէ թիւրիմացութիւններ այդ դէպքում հնարաւոր են՝ գրան ապացոյց են Դորուայ գաւառի հայ եկեղեցեաց հաշուետետրները, որոնց խաճմած հաշիւները նոյն իսկ առաջնորդական հաշուապահը կը զմաքրանաց պարզել. մինչև այդ ծախսերը մասի հետ միացնելով հաշուի բարդութիւնը վերջանում է...

Մեզ թւում է, որ այդ կարևոր հարցը պէտք է կրկին առաջարկել խորհրդածութեան և մեծ, բայց միայն երեցփոխների ժողովում, որոնց է յանձնուած եկեղեցու արտաքին բարեկարգութիւնը։

Ա. Հ.

ԲԵՐԱՆԻ ՋՈՒՐԸ ՎԱԶՈՒՄ Է

—

Կ. Պոլսի «Հայրենիք» լրագիրը, որի խմբագիր պ. Ա. Ա. տաճկական կառավարութեան հաւատարիմ ամենասրբամեհսարիքը, ջատագովութիւններ և հաւատարմական ուղերձներ շարադրել գիտէ, մի բանի առթւ ի վեր իր կիսով չափ կարօտած աստղերը դարձրել է դէպի Երզրումի Սանասարեան վարժարանը, որի նկարագիրը մի օտար երբեմն տալ էր և որ մենք առաջ էինք բերել «Արձագանքի» վերջին թուերի մէջ։ Այդ պ. Ա. Ա. երկար սովորած լինելով տաճկական ռեժի և այն սարկական մթնոլորտին, որի մէջ ապրում է, մինչև անգամ չէ նկատում, թէ ինչպէս իր կերպարանք անուններ եկեղեց երեւում, նրա բայցից չորցած և ծարաւից պապակած կոկորդը։

«Սանասարեան վարժարանին հայերէնի ուսուցիչը—գրում է «Հայրենիքի» խմբագիր Ա. Ա.—ամիս մը առաջ հրատարակեց այդ հիմնարկութեան շէնքին վրայ այնպիսի տեղեկութիւններ, որոնք կարդացողին բերնէն ջուրերը կը վազցնեն»։

Զատ նշանաւոր են այդ տողերը և մենք գիտմամբ ընդգծում ենք, որ ընթերցողը հասկանայ Ա. Ա.-ի հոգեբանութիւնը, որ մեծ կայ ունի նրա սամարի և ախորժակի հետ։

Ինչու է պ. Ա. Ա.-ի «բերնէն ջուրը վազում»։ Որովհետև Սանասարեան դպրոցի հաշուից երեւում է, որ այդ դպրոցը բարեկարգ վիճակի մէջ է՝

«ընդարձակ շրջափակ, մայր եկեղեցուն կից կրծոյէ գեղեցիկ երկյարկ բարձրաբերձ ծանրօրոյ և խիտ թփաստաններով զարդարուած» և այլն և այլն։

Այդ նկարագրութիւնը շարունակելով հաշիւը ցոյց է տալիս, որ աշակերտներն ընդարձակ ննջարաններ ունեն, ինչպէս և ուսուցիչները և դպրոցի առողջապահական պայմանները նախանձելի են։

Ահա այդ է, որ «Հայրենիքի» խմբագրութեան բերնից ջուր է հանում. թէ ինչո «մեկենը» չեն օգնում այդ բարերից։ Բայց «Հայրենիքը» չէ բաւականանում իր այդ կարեկցութեան տեսով, որ բերնից ջուրն է հանում, այլ նա իր սովորական յղչութեամբ այդ յարձունքը դարձնում է դպրոցի հիմնադիր Սանասարեանի յիշատակին, բուն տաճկական խարդավանքութեամբ և չարաբանութեամբ Սանասարեանին

«Խեղճ մարդ, ինչ ձեռքերու յանձնեց իր անունից ստացքը»

և այդ շողոքորթ բացականչութեան աւելացնելով թէ՝

«ամեն օր անէծք կը տեղայ Սանասարեանի յիշատակին»։

Մի գուր կարծիր, որ ձեր բերնի ջրի համար չէր տեղում, վիզում էր ձեզ պատուական ձեռքը և անէծքում էր ձեր ազգի բարերարի յիշատակը։ Երբ պէտք է վերջացնել խեղճի գամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Կավկազում» հրատարակուած է հետեւեալ տարօրինակ լուրը.

ԲԱՔՈՒ. «Տեղացի հայերը խմնալով, որ մօտակայ ապագայում ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելելու է Բաքուն, իրենց մէջը ժողովեցին մի խոշոր գումար (ասեն քան 70,000 ռուբլի). այդ գումարով նախկրատները մտադիր են հիմնել ի պատիւ նորին Վեհափառութեան մի

բաժարան կամ առևտրական դպրոց։ Սովորաբար այսպիսի դէպքերում գոհաբերութիւններ էին լինում յօգուտ Էջմիածնի, բայց այս անգամ Բագուայ հայ հասարակութիւնը միտք է յղացել յաւերժացնել Կաթողիկոսի գալուստը մի աւելի կարևոր (?!) գործով։ Չէ կարելի համակրութեամբ (?!) չվերաբերուել դէպի այդ երջանիկ (?!) միտքը և չցանկալ դորա շուտափոյթ իրագործումը։

Մի կողմ թողնելով այն օտարոտի խնդիրը, թէ որ չափով առևտրական ուսման տաճար հաստատելը աւելի կարևոր է քան ս. Էջմիածնայ տաճարի բազմաթիւ պահանջներին գոհացում տալը կամ մի բաժարան հաստատելը աւելի կարևոր է քան ս. Էջմիածնայ ցաւերը դարմանելու համար միջոցներ տալը, մենք այսքանը կասենք առ այժմ, մի որոշ նպատակով կատարուած հանգանակութիւնը պէտք է այդ նպատակին յատկացնել։ Այս ժողովարարութիւնը սկսել է Բագւում յանուն ս. Էջմիածնի և սորին հանգանակուած գումարը պէտք է ծառայէ միմիայն նոյն այդ մեծ կենդրոնի բազմազան պէտքերին։ Որքան էլ «Կավկազը» նախադրութեան նպատակով անփոյթ փոփոխութիւնը «երջանիկ միտք» համարէ և մաղթէ նորա «շուտափոյթ իրագործումը», այնու ամենայնիւ թէ բաժարանի և թէ առևտրական դպրոցի հիմնարկութիւնը այլ աղբիւրներից պիտի հոգացուին։

Սակայն մենք կարծում ենք, որ այս լուրը մի «ballon d'essai»-է «Կավկազի» թղթակցի կողմից և այն վերին աստիճանի անյաջող, «ապխտած թելերով կարուած»։

* *

Տեղական թերթերում կարդում ենք, որ ի մօտոյ Թիֆլիս է ժամանելու երկրագործութեան դեպարտամենտի վարչութեան վերատեսուչ պ. Պօստրչևը։ Ինչպէս Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնը մի հանդիսաւոր ժողով կը կազմէ ի պատիւ պատուաւոր հիւրի։ Շատ ցանկալի կը լինէր, որ այս ընկերութիւնը չկրկնէր «Կավկասի խրատատուական ընկերութեան» սխալը։ Վերջինս փոխանակ օրէր-պրօֆեսոր և նոր բոլորին օրէնքներ կազմելու մասնաժողովի անդամ պ. Կենինի Կովկասեան արդարադատութեան կարգերի հետ ծանօթանալու —ի պատիւ նորա կազմուած ճաշում վերջ դարձրեց նորան մեր այն անտանելի իրաւակարգերի ծանօթացնելու փոխարեն դատարանի պաշտօնեաների խօսելու ճառերով, որոնք ամենայն բանի ճգնում են «իրենց խելքով հաւնիլ»։

* *

Այսօր օրը երեկոյեան երկաթուղով գնաց Կ. Պօլիս Կարինոյ առաջնորդ Մաղաքիա եպ. Էմինեանը։

* *

Կարսի երկաթուղու գծի ամբողջ երկարութեամբ աշխատութիւնները կատարւում են արագ և մեծ յաջողութեամբ. իսկ երկրորդ կէսի վրայ սկսել են պատրաստութիւններ առնել հողային ճանապարհի տանելու։ Տանելը կսկսեն Կարսից և այն կողմից Մինչև աշնան վերջը յոյս կայ բերելու մինչև տանելը։

* *

Տեղական ռուս թերթերը հրատարակել են հետևեալ հեռագիրը Պետերբուրգից.

«Պաշտօնական. Սերգէյ Կազարովին թոյլատրուած է Վլադիկավկազում հրատարակել շաբաթը երեք անգամ մի քաղաքական գրական լրագիր «Կազբէկ» անունով։

Երկհոր այս պ. Սերգէյ Կազարովը Սարգիս Ղազարեան չէ։ Այս դէպքում Խաչատրեանների, Թումանեանների և այլոց դարձեալ մի հայազգի է աւելանում, որ նուիրում է իրեն Կովկասի ռուս հասարակութեան լուսաւորելու գործին։

* *

Քութայիսից տեղեկացնում են, ի սոցա, որ այնտեղ հինգշաբթի ստյունտերի 28-ին ամառուան յանկարծակի վախճանուեց է Քութայիսի նահանգական դատարանի անդամ Զաքարիա Հարինեանը։ Հանգուցեալը հազիւ 41 տարեկան էր և ամենատաղանդ կարմածքի տէր մարդ։

* *

ԲՐԱՑԼԻՑ (Ռումինիա) մեզ հաղորդում են սեպտ. 12 թուով.

«Շնորհիւ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ձեռք առած եռանդուն ջանքերին՝ այժմ ոչ միայն Բրայլը, այլ և ամբողջ Ռումինիան եւ դատարկուած է Տաճիկ-Հայ պանդուխտներէ։ Անոնք բոլորն ալ, կարգ մը չոր հայ ձեռք բերելու համար, ապրուժ առած են այսօր այն ամէն կողմեր, ուր գործ կայ, աշխատանք կայ։ Մինչև Ամենապատիւ Պատրիարք Հօր միջնորդութիւնը տեղւոյս օտարներուն դեսպանը խոսքի փակած էր անոնց ճանապարհները և ոչ որին անցագիր չէր տար։

* *

ՀԱՂԲԱՏԻՑ մեզ գրում են։ Երկաթուղու գծի վրայ բանող մշակների համար արդէն մեծ քանակութեամբ բնակարաններ են կառուցանում ձորերի բոլոր ճամբաների վրայ. մշակների թիւր անհամար է. գետ նոյն իսկ գծի չինութիւնը սկսուած չէ. այդ էլ, ինչպէս հաստատւում են, սպասել շատով կըսկսուի։ Մինչև այժմ չինուած էին կարգերի ճանապարհը, որ արդէն պատրաստ է, գետի աջ ափը կարերով։ Այժմ չինում են երկու քարեայ կամուրջներ գետի վրայ, մէկը Ախթալայ իջևանի մօտ, Գուգարքի ճակատի հին կամրջատեղը, դէպի Հաղբատ, իսկ միւսը՝ Սանահնայ ամային. «Այսինքի գլոլ» կոչուած տեղում։ Ախթալայ իջևանի մօտ չինուող կամուրջը, որ տանում է ուղղակի դէպի Հաղբատ, մեծ բարիք է մեր հռչակաւոր Վանքի համար, որովհետև դորանով վանքն այցելող ճանապարհորդների համար գետն անցնելու վտանգը փակուած կը լինի։ Արդէն այս կամուրջը Տփխիսեցի հարուստ վաճառական պ. Արամայլեանցին կարող է պատւ կացուցանել իւր խոստումից, որի հիման վրայ պարտը յանձնելու կեղին իւր նախատուած կամուրջը նորոգել. դորա փոխարէն շատ ուրախալի կըլինէր նաև, եթէ պարոնը իւր խոստացած կամրջի վրայ լինէիր ծախսը գործածել այս մեր վանքի շարունակուող վերանորոգութեան վրայ, որով և յաւերժ անուն վաստակած կը լինի։

* *

ՍԱՆԱՀԻՆԻՑ մեզ գրում են։ Աչա երկար ժամանակ է, որ հարիւրը (տիֆը) մեր մէջ բոյն է դրել և կամաց-կամաց զոհեր է տանում. զարմանալին այն է, որ ոչ որ ուշադրութիւն չի դարձնում. հիւանդութեան գոյութիւնը մեր անգրագետ-գիւղական փարչութիւնը թէ և շատ լաւ գիտէ, միայն թաքցնում է, պատճառ որ ամ, իր ժամանակին, յայտնել են «աչքիր են սևուր» նորանցից, այնպէս որ իրանց հիւանդներն էլ են մնացել։ Սորանից մի միջոց առաջ այստեղ այդ հիւանդութիւնը, կարծէք թէ գիրանալով էր վեր տալիս- մի երկու-երեք շաբթուայ մէջ համարեա թէ ընկնող ամեն «հանգչում էին»։ Յասկի դէպքերից մէկը պատմեմ։ Հիւանդանում է մէկ աղամարդ և մեռնում. գիւղացիք չեն մօտենում, անճարացած մեռածի եղբայրը իր եղբօրը չալակում է և մօտաւորապէս հարիւր քայլ հեռու գնացող քահանայի հետ առնում թաղում է նորան. չալակողը գալիս է տուն և նա էլ է հիւանդանում և մի շաբթից յետոյ մեռնում. երկրորդ եղբօրը չալակում է երրորդ եղբայրը և նոյն կարգով թաղում. քիչ ժամանակից յետոյ երրորդն էլ է հիւանդանում և մեռնում։ Միայն այդ ժամանակ գիւղացիք մեղքանում են և տարա գնում թաղում։ Այսպիսով տան աշխատող ձեռքերը կորան, տանը մնաց փոքրերով լցուած, կիսասովամահ։ Այս տեսակ դէպքեր շատ կան, միայն ափսոս, որ թաղցնում են. թէև այժմ հիւանդութիւնը իւր առաջուայ սաստկութիւնը չունի, միայն դարձեալ «կէնդ ու կոնց» իւր ճիրաններ զոհերն է գտնում։

* *

ՄՂԱՐԹԻՑ (Լօռի) մեզ գրում են։ Վերջին ժամանակներս այստեղ սկսեց շատ անձրև գալ, որը և բամբակենին արգելք եղաւ կարելի օր առաջ վերջանալուն. անձրևի պատճառով չէր և աշնանային վարուցանքը։ Եղանակին սառնանկլի ցրտել է և կատարելապէս ձմեռնայ գոյութիւն առաջել, սարերում արդէն ձիւն է եկել։

* *

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽԻՑ

Թեմիս Սրբազան առաջնորդ գերապատիւ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը նորերս վերադառնալով Ատրպատականի վանքից, կիրակի օրը, ամսոյս 24-ին, հոգեհանգիստ կատարեց վաղաթառամ Տիկին Կատարինէ Եւանգուլեանի յիշատակին։

Պատարագի ժամանակ Նորին Սրբազանութիւնը քարոզ խօսելով, թակեց այն բոլոր բարեմասնութիւնները, որոնցով օժտուած է եղել հանգուցեալը։ «Նա լինելով պատուաւոր և բարձր ընտանիքի զաւակ և ստացած բարի բարեկիրթ ու խոհեմութեան հոյակապ, առաց Սրբազան Հայրը, երբէք չէ մոռացել խեղճերին ու թշուառներին, այլ ամենայնեայ, որ հաւել է նորա առատաբաշխ ձեռքը, նա կենդանի սէր և կարեկցութիւն է ցոյց տուել կարօտեալներին ու տառապեալներին, նա սփոփել ու դարմանել է սովեալների ու այրիների վշտերը, և որ ամենագլխաւորն է, նա միշտ խորհելով աշխարհի սին փառքերից և կորստական զառածութիւններից, մինչև իւր բազմօգուտ կեանքի վերջին րոպէն մնաց կատարեալ հայ և հայու զաւակ։ Հանգուցեալի բարի օրինակը թող խրախուսէ և ազդեցիկ լինի մեր քնքուշ սեռի այն անդամներին, որոնք ցանկանում են իրենց անձը նուիրել ազգի և հասարակութեան օգտին գործելու»։ Վերջը Սրբազան առաջնորդը խնդրեց հանգուցեալի հոգու փրկութեան համար։ Այցելողների բազմութիւնը մեծ էր։

Արտաշ.

26 սեպտ. 1895 թ. Շամախի.

* *

ՆՈՐ ԱՒԱԶԱԿԱՅՆ ԽՈՒՄԲ

Բաւական չէր Նաբիի աւազակային խումբը, այժմ նորերն են երևում։ Վերին Ագուլիսից գրում են «Նոր. Օր.»-ին։ Երևանի ու Նախիջևանի ճանապարհներով ուղևորութիւնը այժմ շատ վտանգաւոր է դարձել մանաւանդ Ալամղալուից մինչև Բաշնորաշէնի, այդ երկու կայարանների մէջ տեղ երևացել է աւազակային խումբ բաղկացած 30 հոգուց։ Վերջերս այդ աւազակային խումբը յարձակուել է մի Թիֆլիսեան գիւղի վրայ և ամենապատկառելի կերպով սպանել չորս հոգի միևնոյն ընտանիքից։ Սեպտեմբերի 15-ի գիշերը Դաւալու գիւղի մօտով այդ նոյն աւազակային խումբը քշել է Երասխից առել կողքից մինչև 800 գլուխ ոչխար։ Դաշտային կայարանից տարել են մի քանի ձիեր։ Ախտա կայարանի մօտ պահել են երկու սպանուած մարդիկ։ Այդ դաւաղութիւնները ի նկատի ունենալով՝ իշխանութիւնը արգելել է երեկոյեան ժամը 6-ից յետոյ ձիեր տալ ճանապարհորդներին։ Թուրք գիւղերից մէկն «Էյլէկուցիա» է դրւած, որովհետև կասկած կայ, թէ այդ գիւղը պաշար է հայթայթում աւազակներին»։

* *

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՒԱԶԱԿ ՆԱԲԻԻ ՄԱՍԻՆ

Աւազակապետ Նաբին այս անգամ էլ, ինչպէս երևում է, «յաղթութեան» տարած անպատիժ յետ է դառնում իւր մշտական ապաստանարանը—Պարսկաստան։ Ահա թէ ինչ են գրում Հին-Նախիջևանից «Կավկազ» լրագրին սեպտեմբերի 23 ից. «Նաբին այս անգամ Զանգեզուրի գաւառը մտնելուս միակ նպատակ ունէր, այն է յարձակուել բանտի վրայ և այնտեղից ազատել իր բանտարկուած կնոջը։ Զանգեզուրի գաւառապետը հենց որ իմացաւ իր գաւառի մէջ աւազակների երևալը, այնպէսի արագութեամբ յարձակուեց նրանց վրայ, որ Նաբին ոչ միայն թողեց իր խոյացքնոր մտադրութիւնը - քանդել բանտը և ազատել իր կնոջը, այլ և ստիպուած էր փախչել Զանգեզուրից, որովհետև նրա բոլոր խմբին սպառնում էր անխուսափելի կորուստ. (հապա ծրանց էր պ. գաւառապետը, երբ Նաբին կողոպտում և քանդում էր Զանգեզուրը)։ Նաբին անցաւ Նախիջևանի գաւառը և քանի որ բաւ (!) Ալիքչալի ափին։ Նախիջևանի գաւառապետն իր կողմից բազմաթիւ հեծեալներով գնաց դէպի աւազակի գտնուած տեղը և առաջից ուղարկեց Թախտափոխի կայարանի ուրեադնիկին և մի չափառ։ Դրանք երբ տեղ հասան, աւազակները երևացին եւ սպանեցին։ Գաւառապետն այդ իմանալով և լսելով, որ Նաբին յայտ կարած իւր կնոջն առանելուց, կրկին հետամուտ է Պարսկաստան, թայլ է տալիս, որ խաղաղ և հանգիստ գնայ Պարսկաստան, իսկ ինքը վերադառնում է քաղաք։ Երկրորդ չորրորդ օրն է, որ Նաբին գտնվում է Պարսկաստանում։ Այդ չորրորդ ուրեադնիկն է, որին սպանում են աւազակները, մեր երկրի համար այս երկու ամսուայ ընթացքում, երբ փոխանակ խորամանկ աւազակներին հետամտելու, սկսել են մառացածին գիւղացիներից որեւէ աժան դրամ պահանջել սպառնալիքներ գիւղի թալանուելու մասին։ Եւ ոչ որ էլ չէ հարցնում, թէ այս ինչպէս է, որ զոհերը և զոհերը կատարւում են համբերաբար լինել։ Առաջին երկու սպանուած ուրեադնիկների անուններն են Քօչալի-բէկ, Լաղամ և Աբեէվ։ Դրանցից ոչ մէկը չէ սպանուել աւազակներին հետամուտ եղած ժամանակ, այլ ամենքն էլ հենց առաջին հանդիպելիս զոհ դարձան եղել աւազակներից։

* *

Մեզ հաղորդում են որ հայոց թատրոնական ընկերութիւնը հարատեւել է կրկին մի նոր պատմական դրամայով՝ որ կազմել է պ. Աղամ Սարդարեան-Արեշատեան. դրամայի նիւթը վերցրած է Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի» վէպից և անւանւում է «Աղան Բալասի կամ Երևանի նուաճումն»։

* *

Բաւական ժամանակ է որ մասնաւորներին կայ Պետերբուրգի եւ Մոսկվայի մէջ անցկացնել հեռախօսական գիծ. Այժմ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերին, այդ գիծն արդէն պատրաստ է և սեպտեմբերի 22-ին վերջին փորձեր են կատարւել։ Փորձերը շատ յաջող են համարւում թէև երկաթեան ձայները պարզ չեն լսւում. սակայն ինչպէս մասնագէտները վկայում են, այդ դժուարութիւնը հեռացնելը եւ դիւրին է և հեռախօսի կանոնաւոր գործածութիւնը Պետերբուրգի և Մոսկվայի մէջ կը սկսի 1896 թուի մայիսի կէսին։

* *

Մի ճապաղիկ խարդախութեան դոհ է դարձել Թիֆլիզբոշնիկի յայտնի թարգմանիչ պ. Բրզալէ։ Սորանից երեք օր առաջ պ. Բրզալէը ստանում է բանալից իր գործակից պ. Թալիրովի ստորագրութեամբ մի հեռագիր Տէմեյլ բանինգութեամբ, «վճարեցէք 2500 ռուբլի պ. Ռուբէն Տօնեանին»։ Հետևեալ օրը պ. Բրզալէին ներկայանում է մի պարոն անուանում է իրեն Ռուբէն Տօնեան և ներկայացնում է Բրզալէին նորա ստացած հեռագրի պատճէնն և ստանալով 2500 ռուբլի հեռանում է։ Բրզալէի զրուցներից այդ վճարման մասին նամակով տեղեկութիւն է տալիս Բագու պ. Թալիրովին, բայց որքան է լինում նորա զարմանքը, երբ շաբաթ առաւօտ Թալիրովից հեռագիր է ստանում թէ «Ոչ մի Ռուբէն Տօնեանի մենք փող չենք փոխադրել, խարէութիւն է, դաւէք այդ մարդուն և ձեր դրամները յետ առէք»։ Մինչև այժմ գեռ չէ յայտնուած՝ թէ ով է և ուր է Ռուբէն Տօնեանը։

* *

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ∨

Հայ դերասանական ընկերութիւնը կատարեալ անձայնութեամբ մրցում է Թիֆլիզբոշնիկ հայերի անտարբերութեան հետ։ Զնայելով թատրոնի դահլիճի անպատասխանի դատարկութեան, խումբը շարունակում է իր ներկայացումները ամենայն բարեխղճութեամբ։ Հինգշաբթի օրը ամսոյս 28 ին խումբը բանկային թատրոնում ներկայացրեց «Ժան Բօդրի» կատակերգութիւնը չորս գործողութեամբ, հեղինակութիւն Վաքրիի, թարգմանութիւն պ. Փէլիքս Պիէտը բանականացած է շատ գեղեցիկ պարզամիտ և թարգմանուած է կոկիկ լեզուով. անցաւ շատ յաջող. Ժան-Բօդրի (Աբելեան) 46 տարեկան հարուստ և աղնիւ վաճառական օգնութեան է հասնում իր ծանօթ Բրինել (Վրոյր) առևտրականին որ պատահական դժբաղդութիւնից սնանկանալու վտանգի է ենթարկուած։ Բրինել չէ կամենում օգտուել Ժան-Բօդրի բարութիւնից. վերջինս նրան համոզելու համար խնդրում է նրա աղջկան Լիւսիի (օր. Սիրաչեան) ձեռքը և ստանում է։ Լիւսին և Ժան Բօդրի որդիք Օլիվիէն միմեանց սիրում են, բայց Լիւսին իր հօր պատիւը ազատելու համար համաձայնում է և չէ բանում իր սիրոյ գաղտնիքը։ Երկաւ կողմից ևս սերել են ունենում ծանր հոգեկան տանջանքներ և վերջապէս Ժան-Բօդրին պատահաբար հասկանում է գաղտնիքը և նա երկար հոգեկան տանջանքներից յետոյ ճնշում է իր սիրտը և իր որդեգրի երջանկութեան լրացնելու համար զիջանում է նրան Լիւսիի ձեռքը։ Պ. Աբելեանը այս անգամ ևս ապացուցեց, որ նա բարեխղճաբար ուսումնասիրում է իր դերերը և Ժան Բօդրի բոլոր բարութիւնը և առաքինութիւնը ցոյց տուեց իր խաղի մէջ. պ. Աբելեանի խաղին մասամբ մնասում էր իր գրիմը, գեղին մօրուք, ու մազեր, մինչդեռ հեղինակի ակնարկութիւնները ուրիշ գրիմ են պահանջում։ Օր. Սիրաչեանը անխափան մեծ բնական տաղանդ ունի և կարող էր մեր բեմի ամենալաւ զարդերից մէկը լինել, եթէ միայն նրան չխանգարէր միմիայն սովորական արտասանութիւնը։ Լսելով օրէնքի արտասանութիւնը ձեռք թեւում է, թէ խօսքը ռուս է, նոր հայերէն սովորած։ Տարօրէն, դրական, կրակ, տառապեալներին կայծ այդ բոլորը առատօրէն ունի օրիորդ Սիրաչեանը սակայն լեզուն անհրաժեշտ է, ուղիղ, առանց այդ գլխաւոր պայմանի մնացած բնդունակութիւններն էլ ճկատում են և անախորժ տպաւորութիւն է առաջում հանդիսականին։

Այս անգամ պ. Վրոյրը իր դերածն էր և Բրինէլի դերը կատարեց ամենայն յաջողութեամբ։ Յաջող էին խաղում դերերում նաև տ. Փառանձեմ և պ. Աւետեան։ Մինչև հանդէս պ. Զալալեան կերպին ցոյց տուաւ թէ ծառայի դերն անգամ պահանջում է ուշադրութիւն և բարեխղճութիւն։

«Վարձու կին» Կօզվիլը մեծ գաւառ ձաէթին պատմական հասարակութեան որ վաճառքից գերակատարներին բաւեն ծափահարութիւններով։ Այսօր երեկոյեան Բանկային թատրոնում գերասանական խումբը կըներկայացնէ Սամսէլ պատմական պիէսը։ Յուսանք որ հասարակութիւնը մի քիչ կթօթափէ իր վրայից անտարբերութեան փոշին և կայցելէ թատրոնը։ Ապա թէ երկու ներկայացումներին թատրոնը դրեթէ դատարկ էր։

Հ.

* *

ՓԱՐԻԶ, օգոստոսի 27.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Վաղուց արդէն երկրփոխանների հասարակութեան հոգւն ու թայլ առած գիւտերը հարուստ նիւթ են տալիս [illegible]

[illegible]

ԼՈՆԴՈՆ, օգոստոսի 25-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի» *)

[illegible]

*) [illegible]

բարեկամէ մը կը խնդրեմ առաջնորդել զիս այնտեղ։ Կարելի է հարիւր անգամ բառ ինծ բարեկամս, թէ երբեք չորմէր երթալ անոնցմէ համար, անանց միայն կայ, և այլն։ Քաղթէն Լամէթի մէկ քանի մէջէմէջ փողոցները կը մտնենք, վերջապէս կը հասնինք ամենէն անշուք, ամենէն աղքատ տան մը առջև, բարեկամս կը հեռանայ. այդ տան առաջին յարկը փոքրիկ դուռ մը կը բանայ, ես ուրիշ տեղ կարծէի...Հիմ գիտեր ինչպէս նկարագրեմ ձեզ «Փարիզի հայկական ընթերցարանը»(?). ինչպէս ընեմ որ ամենակարճ ասելով ձեզ ճշգրիտ գաղափար մը տամ այս ընթերցարանի վրայ—եթէ, մեզ չէ ընթերցարան բառը գործածել. աղատ տան մը, առաջին յարկը, աղատ ալ երկու երկուք ու՛ կէս մէթրօ լայն, երկու մէթրօ ալ երկայնութիւն—կարծեմ թերևս շատ եղաւ—ինչպէս հաւի բայնի նման սենեակ մը երևակայեցէք, մէջ անոր՝ հարկաւ, փոքրիկ գրասեղան մը, քանի հատ աթոռ չէք, կարծեմ կանաչ ծածկոցով, եւ աղէկ մը չէր գոյնը սրահէն, քանի որ փոշիի թանձր խաւ մը արդէն փառած էր ծածկոցին, պատերուն, չորս-հինգ աթոռներուն վրայ։ Դրասեղանին վրայ, իրար կառած, երեք և կամ չորս թերթեր կային։ Պատէն կախուած էր, անոր պէտք մասնաւոր,—շարժական շատ փոքր տալարակ դրադարան մը, որուն մէջ եթէ 25—30 հատէն աւելի գիրք կար, իրաւ գրադարանը կը հանգչէր «պարապի» մը վրայ. սեղանմը ձեռքս պարապի վրայ դրի. մառ մը թանձրութեամբ փոշի անխնայաբար ժամանակ նկել ի վեր բանած էր ամբողջ մակերևոյթի. մաքուր ծայրով փորձեցի անանուն գրել, և կատարելապէս յաջողեցայ։

Սրտի ցաւն անոր ապացուցութեան տակ մեկնեցանք «ընթերցարանէն», անտարակուսաբար մենք նորէն չտեսնելու ի վեր առաջին և վերջին այցելուները. Կեցցէն, հազար հեղ կեցցէն, Փարիզի թերահայ բազմաթիւ ուսանողները։

Մեծ ազգի, մեծ քաղաքի մեծ հասարակութիւնները այցելել սրահէնք. Լիվերպուլի պալատին մէջ, աշխարհիս էն նշանաւոր նկարիչներու նկարներուն այս հասարակաց տան մէջ, որոն էն մեծ արժանաւորութիւն է որ կանչ ասկէ փոքրիկ նկար մը առջև. պատմէ մը, առնէջ, խնձոր, բնկոյզ մը, ու ուրիշ պտուղներ, շատ ճարտարութեամբ նկարուած և կառը մը կտաւի վրայ, որուն մէկ անկիւնը ստորագրուած է Զաքարեան անունը. Փարիզի հայ նկարիչը, որուն գործը մինչև Լիվերպուլի պալատը գրաւելու պատիւը վայելած է. Լուսնի չքնաղագեղ պալատը, յաղթական աշտարակները այցելելէն վերջ, կը պատասխանեմ Լոնտոն մեկնելու։

—

Կէս գիշերը անցած, խորհրդաւոր ժամուն, կը կանգնիմ Տօվըրի վրայ աստանուոց ահեղ շոգենաւին մէջ. ինչ որ գաղտնիքն էր, արդէն մնացին Տիէփի եզերքը։ Նաւին առաջին ահեղ սուլումը զգացուց ինծ, թէ քիչ յետոյ աշխարհիս ամենամեծ քաղաքը պիտի գըտնուիմ. օ՜, ուրս Լոնտոն գնելով, երկրորդ անգամ լինելով, ես բաղդաւորելու կը տեսնեմ այն մեծադոյն տարբերութիւնը, որ կայ դրացի այս երկու մեծ ազգերու փողերին, կենցաղին, սրտաբին երեւոյթներու մէջ։

Գրեթէ երկու տարի առաջ էր, որ շատ մը դժուարութիններէ վերջ, շատ մը աշխատութիններէ վերջ, քանի մը երիտասարդներ յաջողեցանք Լոնտոնի մէջ հայ ընթերցարան մը հաստատել, առն մը մէկ կողմի սրահին մէջ. շաբաթը երեք անգամ կը խմբուէինք թերթեր կարդալու, և միևնոյն ժամանակ հայարգակցութեան ընկերութեան կապ մը կը փորձէինք ընել ընթերցարանը, աշխարհաժողովուրդին անկիւններէ թափուած հայերը կը յաւայէինք երբեմն իրար անանւնելու պատեհութիւնը պիտի ունենային։ Լաւ, քանի մը ամիս, քանի մը ամիս միայն շարունակուեցաւ այս շատ օգտակար գործը. Եղան մեծատուն հայ անդամներ այս գաղթականութեան մէջ որք ուղեցին պիրտներ, գինիներ, պիլաաօներ, չեմ գիտեր ինչեր ուզեցին անանել ընթերցարանի մը մէջ, հակառակ պարագային մէջ հեռացան օգնելէ գէթ շաբաթը 1-2 շիլինգներով.—«բըլանները կայ, կերթամ ոչ» ըսելով հեռացան. չնայելով այս գրութեան դարձեալ եղան շարունակողներ ընթերցարանի դուռները բաց պահելու. է հ, այս աշխարհիս մէջ աշխոյժ կայ յաւիտենական, որ մէն ու ընթերցարանի վարչութիւնը կէինայ անակներու ձեռքը, որոնց ամենամեծ գործերնին կը լինի...ոչ աւելի քան 15 օրուան մէջ փակել ընթերցարանը ու քաշուիլ իրենց գրասենեակներուը։ Ահա ձեզ Լոնտոնի ալ հայ ընթերցարանի պատմութիւնը։ Հ. Թ. Չ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** «Նովոյէ Վրեմեան», որ իր սիրած զգոյն է տալիս ամեն մի նոր երևոյթի, Պ. Պօլսի հայկական շարժումները ևս համարում է անգլիական «ինտրիգների» հետևանք և գտնում է, որ անգլիացիք արդէն հասել են իրենց նպատակին և Բեռլինի փաշայի մեծ վէզիր նշանակուելովը կը մեռնի հայկական հարցը։

